ՆԱԽԱԳԻԾ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«___» _____ 2017 թվական N_____-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2000 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 11-Ի N 138 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է***.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 11-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման մասին» N 138 որոշման 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «զ^{9}» և «զ^{10}» ենթակետերով.

«զ^{9}) 2018 թվականի հունվարի 1-ից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արգելվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծված (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունից) «2012» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորված ապրանքների իրացումը.

զ^{10}) 2018 թվականի հուլիսի 1-ից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արգելվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ներմուծված (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունից) «2013» և «2014» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշներով դրոշմավորված ապրանքների իրացումը.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**